Ց. Մ. ՁԱԽԱԼՅԱՆ

ԵՐԵՎԱՆԻ ՄԵՐՁՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՆԳՍՏԻ ԳՈՏՈՒ ՍՏԵՂԾՄԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋԸ

Նախասովետական Երևանը մի գավառական քաղաք էր իր վատառողջ կլիմայով, հողաշեն տներով ու փոշոտ փողոցներով, զրկված անգամ իր ժամանակի քաղաքների տարրական հարմարություններից ջրմուղից, կոյուղուց, պուրակներից, հանգստի կազմակերպման այլ հնարավորություններից։ Այժմ Երևանը հասել է քաղաքաշինության բարձր մակարդակի, որը հիացմունք է պատճառում Սովետական Միության և աշխարհի բոլոր ծայրերից Հայաստան այցելողներին։

Աճող մայրաքաղաքը նորանոր խնդիրներ է առաջադրում ոչ միայն բուն քաղաքի, այլև նրա շրջապատող մերձքաղաքային վայրերը հանգստի համար լավագույն ձևով օգտագործելու, մայրաքաղաքի շուրջը լայնանիստ հանգստի գոտի ստեղծելու համար։ Այդ առավել ևս անհրաժեշտ է մեր քաղաքի բուռն աճի պայմաններում, երբ արդյունաբերական խոշոր օբյեկտների տեղադրման և ագգաբնակչության աճի հետ զուգահեռ առաջ են գալիս մի շարք դժվարություններ, որոնք բացասարար են անդրադառնում բնակչության հանգստի պայմանների վրա։ Մի շարք արդյունաբերական ձեռնարկներ կեղտոտում են Երևանի օդային և ջրային տարածությունները։ Քաղաքի սահմանների ընդլայնումն առաջ է բերում քաղաքային տրանսպորտի արագ աճ, որն իր հերթին հանդիսանում է աղմուկի, արտադրված թունավոր գազերի և փոշու տարածման աղբյուր։

Ազգաբնակչության կենցաղային պայմանների աննախընթաց բարելավումը, հնգօրյա աշխատանքային շաբաթին անցնելը պահանջում են բարելավել ինչպես քաղաքի ներսի, այնպես և մերձքաղաքային հանգստի վայրերի ու հիմնարկների ստեղծման ու ընդլայնման գործը։ Մեր երկրի բարենպաստ կլիման, առողջարար ու զովաշունչ օդը, սառնորակ ջրերը, անտառները, բնության հրաշագործ գեղեցկությունը, լճերն ու ջրային մակերեսները պայմաններ են, որոնք անհրաժեշտ են հանգստի կազմակերպման համար։

Մեր մայրաքաղաքի աշխատավորության հանգստի կազմակերպումը ելնելով նրա բնա-կլիմայական պայմաններից, կարելի է բաժանել երեք տիպի՝ ամենօրյա (աշխատանքից հետո), շաբաթական (հանգստի և տոնական օրերին) և միամսյա (արձակուրդների ընթացքում), այլ կերպ ասած, հիմնականում կարճատև և երկարատև հանգստի։

Ամենօրյա հանգիստը, աշխատանքից հետո մի քանի ժամ տևողությամբ, կազմակերպվում է գլխավորապես քաղաքի սահմաններում գոյություն ունեցող կանաչ տարածություններում, ջրային մակերեսներում, ինչպես նաև կուլտուր-լուսավորական հիմնարկներում։

Այսպիսի հանգիստը փաստորեն սկսվում է երեկոյան ժամերին բնակելի շենքերի բակերից և ավարտվում է խոշոր հանգստի գոտիներով, անտառային պարկերով։

Երևանի կանաչ տարածությունները՝ պարկերը, այգիները, պուրակները և զբոսայգիները 1966 թ. հունվարի 1-ի տվյալներով կազմում են 501 հա, կամ յուրաքանչյուր մեկ քաղաքացուն ընկնում է 7,7 քմ· տարածություն, առանց անտառների և շրջակա պտղատու այգիների։ Ապագայում, այսինքն 1980 թ. հասարակական կանաչը նախատեսվում է հասցնել 22,5 քմ. ամեն մի բնակչին։ Երևան քաղաքում ընդհանուր կանաչի մակերեսը, հաշված բակերի կանաչ տարածությունները, կկազմի մոտ 8000 հա։

Երևանի ամենօրյա հանգստի կազմակերպման գլխաններն են.

1. Միկրոշրջանների և միջթաղամասային հասարակական այգիները։

2. Բոլոր խոշոր ու մանր պուրակներն և զբոսայգիները։

3. Քաղաքային անտառապատ տարածությունները, Հրազդանի և Ավանի հանգստի գոտիները։

4. Քաղաքային սպորտ բազաները՝ ստադիոնները, հիպոդրոմը, վելոդրոմը, սպորտ հրապարակները։

5. «Երևանյան լիճը», «Կոմսոմոլի լիճը», Քանաքեռի ջրամբարը և բազմաթիվ ջրային խոշոր ու մանր տարածությունները։

6· Կուլտ-լուսավորական հիմնարկները, թատրոնները, կինոթատրոնները, համերգային դահլիճները, ինչպես նաև քաղաքային թանգարանները և ցուցահանդեսները։

7. Քաղաքի պատմական, հնագիտական և ճարտարապետական հուշարձանները և նրանց կից կանաչապատ տարածությունները։

Անտարակույս, ամենօրյա հանգստի կազմակերպման հարցերը հիմնովին ուսումնասիրված չեն և կարիք է զգացվում լուրջ ուսումնասիրության։ Բանը նրանում է, որ միայն օբյեկտների թվարկումով այն չի վերջանում։ Կազմակերպական տեսակետից ամեն մի օբյեկտի մատուցած ծառայությունը մարդու հանգիստը նորմալ վիճակի բերելու համար պահանջվում է երկարատև ուսումնասիրություն, որը թերևս առանց ֆիզիոլոգների և բուժաշխատողների հնարավոր չի։

Կարճատև ու երկարատև հանգստի կազմակերպման հարցերը մերձքաղաքային գոտու պայմաններում բավականին ուսումնասիրված են թե մեր Միությունում և թե արտասահմանում։

Երևան քաղաքի գլխավոր հատակագծի տեխնիկո-տնտեսական հիմունքներում համառոտակի մշակված են հանգստի գոտու կազմակերպման հարցերը (1963—1965 թ.)։

Բնական ռեսուրսների նախնական ուսումնասիրությունը, կլիմայական բարենպաստ պայմանները, որոնցով օժտված են Աշտարակի, Ապարանի, Հրազդանի, Արովյանի և Սևանի շրջանները, մեծ հեռանկարներ ու հնարավորություններ ունեն Երևանի մերձքաղաքային հանգստի գոտու կազմակերպման համար։

Երկարատև ու կարճատև հանգստի կազմակերպման համար Սևանի շրջանը ունի բոլոր լայն հնարավորություններ։ Մեղմ կլիման, տաք ու արևոտ լողափերը, բնական լանդշաֆտի գեղեցկությունը մեծ թվով տուրիստների և հանդրստացողների են գրավում Արեգունու ափերը, որտեղ արդեն կառուց-

վել են մեծ թվով պանսիոնատներ, հանգստի տներ, պիոներական ճամբարներ և սպորտային բազաներ։

Այլ գեղեցկություն ունի Մարմարիկ գետի հովիտը՝ իր անտառապատ տարածություններով, որը երկար տարիներ օգտագործվում է իբրև հանգստավայր։ Այստեղ Մարմարիկ գետի վրա ջրամբարներ կառուցելուց և բարեկարգելուց հետո Հանքավանը, Մեղրաձորը, Աղավնաձորը, Մարմարիկը կդառնան սանատորիաների, հանգստյան տների և մանկական առողջարանների հիմնական գոտիներ։ Ծաղկաձորը, որը այս կոմպլեքսի բաղկացուցիչ մասն է կազմում, առավել ևս կհարստանա մանկական առողջարանների, պիոներական ճամբարների ու սպորտ բազաների խիտ ցանցով։ Այժմ այստեղ կառուցված սպորտային մեծ կոմպլեքսը, որը Միության մասշտաբով խոշորագույններից է, մեր հանգստի գոտին վերածել է սպորտի լավագույն բազայի։

Երկարատև հանգստի մի ուրիշ օջախ, որը ձգվում է Դալարկա գետակի ափերով և դեպի վերի սարահարթերը, Աղվերանից մինչև Արղաքան՝ 5 կմ երկարությամբ իր ինքնատիպ կլիմայական և բնական պայմաններով, վերակառուցումից հետո նույնպես լավագույն հանգստավայր կդառնա։

Մեծ հեռանկարներ է կանխատեսվում Ապարանի շրջանում։ Այստեղ կառուցված 750 հա մակերես ունեցող ջրամբարը, Արագած լեռան վեշերը՝ ծաղիկներով և սառնորակ աղբյուրներով, ինչպես և ստվերախիտ անտառները հիանալի կուրորտներ կդարձնեն Վարդենիսը, Ջքնաղը, Թթու-ջուրը, Քասախը, Ջովունին, որտեղ հազարավոր երևանցիներ ամառվա շոգ օրերին կհանգստանան կառուցվող հանգստի տներում, հյուրանոց-պանսիոնատներում, տուրիստական ճամբարներում։

Հանգստի ավելի փոքր գոտիներ կստեղծվեն Բյուրականի, Օհանավանի, Արղնու, Լուսակերտի, Բժնու, Հրազդանի ու Ջարենցավանի շրջակայքում։

Այս բոլորի հետ մեկտեղ մեծ հետաքրքրության են ներկայացնում Էջմիածինը, Զվարթնոցը, Գառնին, Գեղարդը, Պտղնին և այլ ճարտարապետական ու պատմական հուշարձանները, որոնք զբոսաշրջիկների ամենօրյա հաճախումների վայրերն են։

Վերոհիշյալ հանգստի վայրերը՝ արդեն կառուցված հիմնարկներով, հիմք կդառնան Երևանի ապագա խոշոր հանգստի գոտիների համար։

Երկարատև հանգիստը՝ արձակուրդի ընթացքում, կարճատևը՝ կիրակի և տոն օրերին, ունեն իրենց յուրահատուկ պահանջները։

Եթե երեխաների առողջարանների կազմակերպման հարցերը որոշ չափով Պրակտիկայում լուծված են (պիոներ ճամբար, մսուր-ամառանոց, մանկապարտեզ-ամառանոց, մանկական սանատորիա), ապա մեծահասակների մի շարք նոր հանգստյան հիմնարկների ստեղծման հարցերը պահանջում են հատուկ ուսումնասիրություն։

Պանսիոնատները, կեմպինգները, տուրիստական ու սպորտային բազաները և այլ առողջարանները կարող են Երևանի մերձքաղաքային գոտում տեղադրվել միայն բազմակողմանի ուսումնասիրությունից և հիմնավորումից հետո։

Ճշտման են ենթակա ոչ միայն նրանց ֆունկցիոնալ բնույթը, այլև նրանց պահանջի, քանակության հարցերը, ըստ աղդաբնակչության ճաշակի և դեմոգրաֆիական կազմության։

Մերձքաղաքային հանգստի գոտու համար չափազանց կարևոր է տրանս-

պորտային միջոցների և բարեկարգված ճանապարհների առկայությունը հանգստի գոտու և քաղաքի միջև, ինչպես նաև այդ գոտու ներսում։ Արագընթաց տրանսպորտի միջոցները կրճատում են ծախսվող ժամանակը ճանապարհի վրա, իսկ դա նախապայման է, որ ավելի շատ հանգստացողներ մեկնեն հանգստի գոտի։ Առհասարակ ընդունված է, որ կարճատև հանգստի համար ճանապարհի վրա ծախսվող ժամանակը մի ուղղությամբ պետք է 1—2 ժամից ավելի չլինի։

Մերձքաղաքային հանգստի գոտու կազմակերպումը պրոբլեմային հարց է, որը պետք է բավարարի տարբեր տարիքի, տարբեր խավերի մարդկանց հիգենիկ, կուլտուրական-հոգևոր պահանջները՝ պահպանելով ու բարելավելով հանգստի համար տրամադրվող բնական միջավայրը՝ լանդշաֆտը։ Լանդշաֆտի և ճարտարապետական պլանավորման հարցերը կարևոր տեղ ունեն հանգստի հիմնարկների տեղադրման գործում։ Հանգստի վայր նախագծելիս պետք է հաշվի առնել բնությունը, բազմակողմանի ուսումնասիրել նրա առանձնահատկությունները՝ ճիշտ կողմնորոշվելու համար։ Չի կարելի առանց լանդշաֆտի խոր ուսումնասիրության, առանց բժշկա-առողջական տվյալների հանգստի վայրի ընտրություն կատարել։ Այս հարցերի լրիվ պարզաբանումը նպաստում է ոչ միայն ճարտարապետական-հատակագծային հարցերի ճիշտ լուծմանը, այլ հանդիսանում է կարևոր գործոն նրանց տիպերի ընտրության և աշխատանքային ռեժիմի որոշման համար հարցերում։